

ընդհանուր առմամբ չէ կարելի քանի մը հարեւանցի ճամբորդներու տեղադրութիւնները իբր արժեքաւոր հիմքն դնել: Վանքերու հիմնարկութեան թրւականները ճշտելու համար՝ չէ դիմած «Ազգապատում»-ի եւ ոչ ալ Մ. Արեղեանի Հայ հիմն գրականութեան պատմութեան: Կրնանք փաստաբար ըսել նոյնիսկ՝ թէ նոր հրատարակուած քարտէսները իր սեղանին վրայ չէ ունեցած, այլ միշտ դիմած է հին հեղինակներու, որոնք հմայած ըլլալու են զինք: Այլապէս Սեւ լեռներու մասին պիտի չգրէր (էջ 281): «Սեւ լեռները կամ Սեւ լեռները կամ Ամանոս լեռները Տաւրոսեան լեռներու մէկ բազմութիւն են ու ժողովրդին Կիլիկիայի մէջ կը գտնուին»: Թողային Կիլիկիոյ մէջ լեռներ...:

Սեւ լեռները Կիլիկիոյ արեւելեան սահմանը կը կազմեն՝ ծնունդ առնելով Որոնդէսի գետաբերանէն՝ Մուսա տաղէն եւ Պէյլանէն. այս կէտերէն ուղղաձիգ կը յառաջանայ դէպի հիւսիս՝ մինչեւ Զինուր գետի Մարաշի մօտ արեւմուտը թեքած վայրը, եւ հոն է որ կը վերջանան Սեւ լեռները, ունենալով այս ծայրամասին վրայ Տիւրքի տաղը, որ ամէնէն բարձր գագաթն է Սեւ լեռան:

Երբ Սեւ լեռներու սահմանը այս է, ուրեմն Մաշկեւորի վանքը (էջ 235), զոր թորոս Ա. իշխանը հիմնած է, չէր կրնար գտնուիլ Սեւ լեռներուն վրայ, քանի որ թորոս հազիւ Սիւ ու Անաւարդան գրաւած էր: Թէլ, Համտուն, Ամուտէ, Անտեռուն, Կապան, որոնք Սեւ լեռներու արեւմուտքն են, այդ թուականներուն կը գրտնուէին Պաշակապետներու ձեռքը: Իսկ դաշտային Կիլիկիան՝ Բիւզանդացիներուն: Արդէն Մաշկեւորի վանքին Գ. իշխատակարանը կու տայ վանքին սահմանը՝ «Ի սահմանս Ստոյն ի լեռինս որ կոչի Տաւրոս»: Ստեփանէ իշխանն էր որ առաջին անգամ գրաւեց՝ կամ լաւ եւս է ըսել սապատակեց Սեւ լեռներու հիւսիսային մասը:

Հայերս Սեւ լեռան վրայ մէկ կամ երկու վանք ունեցած ենք, Բարսեղեանց եւ Հոփտին: Անոցամ մը միայն կը յիշուի յիշատակարանի մը մէջ թէ Սեւ լեռան մէջ գրուած է հայերէն գիրք մը: Սեւ լեռան բազմաթիւ վանքերու ամբողջութիւնը կ'ըսուի Պառլախու՝ «Դրախտ Աստուծոյ»: Պառլախու յատուկ անուն մը չէ՝ վանքի մը: Երգնկացին Տաւրոսեան վանքերը՝ Դրաղարկը, Արքաւաղին, Ակները եւ ու-

րիշ վանքեր այցելելէ յետոյ կ'ըսէ՝ այս տեղերը Դրախտ Աստուծոյ է:

Սկեւոյ, Սաղրու, Յովհաննու Անապատ, Գեմադէր վանքերը՝ Լամբրոնի շրջակայքը կը գտնուին եւ հազիւ իրարմէ ժամ մը հեռաւորութեան վրայ: Պապեռոն բերդը Լամբրոնէն չորս ժամ դէպի հարաւ-արեւմուտք կը գտնուի, ուր ունինք քանի մը վանքեր, որոնցմէ ծանօթ է Մլիճոյ վանքը: Այս վանքերուն եւ ո'չ մէկը Կորիկոսի բերդերուն մօտականները կը գտնուին:

Մամաս, Հոփտին եւ Սուքրի վանքերը յունական են, Սարվատիքար ամրոցին շուրջը կը գտնուին: Հոփտին՝ այժմու Հոփտունն է, Ժընտըճաղէն երկու ժամ դէպի հարաւ:

Շուխր Խանդաւաղի Ս. Սիոնի վանքը կը գտնուի Զէյթունի միջնաբերդին ստորոտը, որ մինչեւ հիմա կը պահէ այդ անունը զէյթունիներուն մօտ:

Շուղը, ասորական սաղր բառն է, որ կը նշանակէ անցք, կիրճ, հովիտ: Մեր Շուղըի նշանաւոր վանքը կիրճի մը մէջ կը գտնուի Տօնկալոյի մօտերը: Իսկ Սաղրուի Ս. Աստուածածին վանքը՝ ուր Ներսէս Լամբրոնացին ուսած է, Լամբրոն բերդին արեւելեան կողմը խորխորատ ձորի մը մէջ չինուած է, որ անպատանելի է նոյնիսկ յիշատակարաններու կողմէ:

Մեր այս գրութիւնը չափ պիտի երկարէր, եթէ Հ. Համազասպի տեղագրական թերիւնքը մէկիկ մէկիկ յիշել եւ ուղղել ուղէինք: Երկու ամսուայ պտոյտ մը Կիլիկիա, պիտի բաւէր իրեն՝ որ տեղագրական ծանօթութիւններ ունենար վանքերու դիրքերու մասին եւ չչիտթէր Սեւ լեռը՝ մեր հին գրականութեան Սեւ ու մթին լեռներու հետ:

Սեւ ու մթին լեռները բոլորովին անջատ են Սեւ կամ Ամանոսեան լեռներէն: Մթին լեռները կը գտնուին Տաւրոս լեռան հարաւային ստորոտը. կը սկսին Տօնկալայէն, Կապանէն ու Անտեռունէն կ'երկարին մինչեւ Գարա պաշար՝ Սիւն դէպի արեւելք չորս ժամ հեռաւորութեան վրայ: Այս Սեւ ու մթին լեռներու մէջ մենք ունինք՝ արեւելքէն դէպի արեւմուտք՝ Արեղի, Մեծքար, Ստեփաննոս Ունեցիի վանքը, Ժընտըճի վանքը, Շուղըի նշանաւոր վանքը, Այգեկ վանքը: Այս բոլոր յիշուած վանքերը առանձնապէս հայերու կողմէ չինուած են՝ հայկական ճարտարապետութեամբ. այս տեղերը ո'չ յունական

եւ ոչ ալ ասորական վանքեր կան. կան Պաշակապետներու մենաստաններ՝ քիչ թիւով:

Ամփոփելով մեր խօսքը, կրնանք ըսել՝ թէ այս հատորին մէջ Կիլիկեան վանքերու տեղագրութիւնը թերի է:

Կիլիկեան տեղագրութիւնը ուսումնասիրող շատ քիչ հեղինակներ կան, ուստի այս նիւթը միշտ ալ վիճարանութեան դուռ կրնայ բանալ. կը յուսանք թէ մօտիկ ապագային այդ հոգամասերը քննելու եւ ուսումնասիրելու պատեհ առիթներ պիտի ունենանք եւ այն ատենն է որ վերջ պիտի դնեն տարակարծութիւնները, եւ պիտի կարենանք ճշտորոշել բերդերու եւ վանքերու իսկական ու իրական տեղերը:

Տեղագրական ակամայ թերիւնքը առանց հաշուի առնելու, պարտաւոր ենք ըսելու՝ որ Հ. Համազասպ Ոսկեան, բանասիրական արժեքաւոր ու գնահատելի գործ մը փաստարած է իր այս վերջին հատորովը ու մեծ ծառայութիւն մատուցած է Կիլիկեան պատմութեան:

ՏԲՔ. Յ. ՏԵՐ ԳԱԶԱՐԵԱՆ

Հալեպ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ: - Աշխատասիրեց Ա. Գ. Արրահամեան: - Լաքակազմ, մեծ ուրաւաձալ, էջ 372, մէկ գումար եւ քաղաք, մի մը անգոյն ցկարներով: - Երեւան, 1956, գիւն 17 ռուբլի 30 կոպէկ:

Իրապէս աշխատուած եւ մեծարժէք գործ մըն է, որուն կարօտը վաղուց կը զգացուէր: Յովհաննէս Իմաստասէր (ծագած Նաեւ իբր Սարկաւազ վարդապետ, կամ լոկ Սարկաւազ, կոչուած Նաեւ Սոփիստոս, Պոնտիկոս եւ Սարկաւազ Հոնտոս) իր ժամանակներու գիտնական մատենագիր դէմք մըն է մեր մշակութի պատմութեան վերագործման շրջանին սկզբը՝ նաւորութեան, այսինքն ԺԱ-ԺԲ. դարերուն: Իր մասին մեծ գովեստով կը խօսին իրեն ժամանակակից մեր պատմագիրները եւ մատենագիրները: Իսկ մեր շրջանին քանի մը փորձեր կատարուեցան իր կենսագրութիւնը եւ գործը մեզի ներկայացընելու, սակայն ընտրելագոյնը անտարա-կոյս Արրահամեանի այս աշխատութիւնն է:

Յովհաննէս Իմաստասէրի ծննդեան բուն թուականը մեզի անծանօթ կը մնայ, սակայն տարակոյս չկայ որ մեռած էր 1129-ին: Ծննդեան վայրը կ'ընդունուի Փառլախ, որ Արցախի գաւառին (այն ատեն մաս Գանձակի) կը պատկանի:

Սխտ շահեկան է, որ Գանձակ (Արցախ) այդ շրջանին օրրանն էր հայ մշակութիւն: Մեր մեծագոյն օրէնագէտները հոնկէ կու գան ժամանակակից մեր մատենագրութեան քաջ ծանօթ եւ նոյն շրջանէն դէմքերուն հետ: Օրինակ, յիշենք Յովհաննէս Իմաստասէրէ գաղտնի Յովհաննէս Տաւրոսցի, Գրիգոր վարդ. Թորակեր, Մխիթար Գոշ, Դաւիթ վարդ. Ալաւայ որդի, Կիրակոս Գանձակցի, Սարկաւազ վարդապետ (Գոշի աշակերտը), եւ դեռ ուրիշներ:

Փառլախ, ըստ Արրահամեանի՝ ներկայիս կը կոչուի Կալեֆեանդ, սակայն զժրախտարար չի յիշուի ինչ սահմաններու մէջ գտնուիլը ներկայիս:

Հաղթատ կ'ընդունուի Յով. Իմաստասէրի կրթութեան վայրը, քանի որ ան Հաղթատցի ալ կոչուած է:

Արրահամեան իր գործին սկիզբը մանրակրկիտ քննութեամբ կը հետեւի Յով. Իմաստասէրի կեանքին: Արրահամեան սակայն Սարկաւազ անուան մասին գոհացուցիչ բացատրութիւն մը չի տար, այլ կը գոհանայ Հ. Ալիշանի այն ենթադրութեամբ՝ ըստ որուն Յովհաննէս փոքր տարիքէն սարկաւազութեան աստիճան ստացած ըլլալով, այդ անունով ալ շարունակուել է յորջորջուիլ: Ասիկա զժրախտարար եմքաղաքի մը ըլլալէ զատ շատ բնագրային բացատրութիւն մըն է: Ինչպէս որ Արրահամեան ինքն իսկ նկատած է (էջ 30). եղած են ուրիշներ ալ Սարկաւազ մականուանուած, որոնք սակայն բոլորն ալ Յովհաննէս անունը ունեցած են: Հաւանական ըլլայ որ յիշուած Յովհաննէս Սարկաւազներէն ոմանք իրապէս Սարկաւազ եղած են: Բայց կան ալ որ, ինչպէս Գոշի աշակերտ եւ Գեորգի վանքի վանահայր Յովհաննէս Սարկաւազ վարդապետը, Սարկաւազ լոկ իբր մականունը գործածած են, ըստ իս, անտարակոյս իբր նուագական յորջորջում, եւ գուցէ հետեւելով Յովհաննէս Իմաստասէրի օրինակին, որ Սարկաւազ յորջորջումը պահած է իր ստահաւարար իբր համեստութիւն եւ իբր նուագական յորջորջում, ինչպէս Յովհաննէս Պլուզ, Մխիթար Գոշ, եւն.:

Ձարմանալի է որ Յով. Իմաստասէրի նման յաճախ յիշուած մեծ գիտնական վարդապետի մը մասին մեր մատենագրութիւնը չառ ժուժկալ է կենսագրական տրւեալներով: Ընդհանրացումներ չառ կան, սակայն մանրամասնութիւններ կը պակասին: Քիչ տեղեկութիւն ունինք իր դըպրոցին մասին յԱնի: Կցկտուր տեղեկութիւններ միայն իր աշակերտներուն վերաբերող, որոնց չարքին կը յիշուին Երեմիա Անճրեւիկ, Սամուէլ պատմիչ քահանայ Անեցի, եւ գրեթէ միայն անուամբ յիշուող Պաշտուր, Գրիգոր, Յովհաննէս Անեցիները, Ստեփաննոս քահանայ Չոմղոմա եւ «մեծ իմաստուն Սարգիս» մը: Յով. Իմաստասէր թաղուած է Հաղբաս:

Այս հատորին մէջ ձեռագրական համեմատութեամբ հրատարակած եւ ծանօթագրած է Արրահամեան Յով. Իմաստասէրի Պատմական, Թուարանական, Տիեզերագիտական, Տոմարական, Բանաստեղծական, Փիլիսոփայական աշխատութիւնները, որոնց բոլորին համար ալ բընագիրներ տալէ առաջ ուսումնասիրութիւններ կու տայ խղճամիտ կերպով:

Արրահամեան կը յիշէ տոմարական աշխատութիւն մը սա խորագրով. «Ստեփաննոս երիցու տոմարագէտի, որդւոյ Յովհաննու քահանայի ասացեալ յաղագս ընթացութեան արեգական քան եւ ութ ամաց եւ շրջագալութեան լուսնին ինն եւ տասներեակ ամաց, որ լինի միահամուռ ընդ ամենայն՝ ամբ ԾԼԲ (532)»: Արրահամեան կ'ըզրակացնէ. «Նկատի ունենալով որ այս Ստեփաննոս երեցի ժամանակը համընկում է Յովհաննէսի ժամանակի հետ, եւ ապա՝ Ստեփաննոս երեցը տոմարագէտ է ու յիշուած է որպէս Յովհաննէս քահանայի որդի, ուստի եւ հաւանական ենք համարում, որ այս Ստեփաննոսը հէնց մեր Յովհաննէս Իմաստասէրի որդին եղած լինի» (էջ 28-29):

Պարզապէս որովհետեւ Ստեփաննոս երեց տոմարագէտ է եւ հօր անունն ալ Յովհաննէս քահանայ, եւ որովհետեւ Արրահամեան կ'ընթադրէ որ «ժամանակը համընկում է Յով. Իմաստասէրի ժամանակին հետ, ան հաւանական կը նկատէ որ Ստեփաննոս երեց որդին է Յովհաննէս Իմաստասէրին: Ասիկա սակայն լաւագոյն երեւակայութեան համար իսկ պատմական անմարտելի բան մըն է:

Նախ ոչ մէկ կերպով հաստատուած է

որ «ժամանակը համընկում է, այսինքն Ստեփաննոս երեցի կեանքն ու դործը ժամանակակից է Յով. Իմաստասէրին: Ստեփաննոս երեցի տոմարագիտական գործին խորագիրը կը յիշէ Յովհաննէս քահանայ իրր հայր, մինչ Յով. Իմաստասէր վարդապետ էր, վանական: Տարակուսելի է որեւէ հաւանականութիւն ներկայ տրուեալներով Ստեփաննոս երեց տոմարագիրը Յով. Իմաստասէրին որդին նկատելու համար: Ոչ մէկ վկայութիւն ունինք Յով. Իմաստասէրի ամուսնացած ըլլալուն մասին: Նոյն ատեն մեզի չի պակսիր կենսագրական տեղեկութիւններ Յովհաննէս քահանայի որդի տոմարագէտ Ստեփաննոս երեցի մասին, զինքը տարբեր անձ հաստատող:

Ստեփաննոս երեցի տոմարագիտական վերոյիշեալ գործէն կ'երեւայ թէ լոկ օրինակ մը կը գտնուի Երեւանի Պետական Մատենադարանին ձեռագրատան մէջ եւ ունի թիւ 3504 (էջ 218բ): Արրահամեան սակայն կը ծանօթագրէ որ «տոմարական տեքստը, դժբախտաբար, թերի է» (էջ 28): Արդ ուրախ եմ ըսելու որ իմ ձեռագրաց հաւաքածոյիս մէջ ունիմ նոյն տոմարագիտական գործին մէկ հին, ընտիր եւ ամբողջական օրինակը: Երեւանի թիւ 3504 տարեթիւր ծանօթ է ինծի եւ Արրահամեան ալ չի տար: Գալով իմ հաւաքածոյիս ձեռագրին՝ ահա բնագրին խորագիրը եւ քանի մը ծանօթութիւններ, քանի որ գրախօսականիս սահմանները ատկէ աւելին թոյլ չեն տար: «Ստեփաննոս իրիցու տոմարագիտի որդւոյ Յովհաննիս քահանայի, ասացեալ յաղագս ընթացութեան արեգական (նշանագրով) ԻԼ (28) ամաց եւ շրջագալութեան լուսնի (նշանագրով) ԹԺ (18) եակ ամաց, որ լինի ի միահամուռն ընդ ամենայն ամբ թուով ԾԼԲ (532)»: Ձեռագիրս վերականգնուած է ԺԼ. դարուն հին ու նոր զանազան ձեռագրական հատուածներով: Ստեփաննոսի տոմարի գրչութիւնը հիմն է, անսխալ, յիշատակարան չունի, սակայն բուն տոմարէն վերջ գուշակական հատուածներու մէջ գրչէն կայ սա. «Չոմա Ծնորեանն քրիստոսի այսպէս արայ որ է ԾԾԳ (753), եւ զհայ մեծ թուականն, ի վերա բեր եւ այն է»: Այսինքն 753ին աւելցուր 551, որ կը հաւասարի 1304: Ըստ իս այս իսկ է գրչութեան թուականը, որ կը հաստատուի նաեւ հնագործմ գրչութեամբ եւ գեղեցիկ խորանով եւ զարդագրերով:

Ո՞վ էր այս Ստեփաննոս երեց որդի Յով. քահանայի: Արրահամեանի նոյնացումը իրր Իմաստասէրի որդի Ստեփաննոս՝ վերը չընդունեցանք: Յետոյ իմաստ պիտի չունենար որ Ստեփաննոս, եթէ Իմաստասէրի որդին էր, իր հօր նման գրէր նոյն նիւթին չուրջ, քանի որ Իմաստասէրն ալ գրած էր այդ մասին արդէն:

Բազմավաստակն Աճառեան իր Անճանուններու բառարանին մէջ իրր թիւ 198 կը յիշէ Ստեփաննոս երեց, որուն համար կը գրէ. «ապա վարդապետ Կոռիկոսի, որդի Յովհաննէս քահանայի, հրաւիրեց Յովհաննէս Պլուզ Երզնկացուն ճառխօսել Կիլիկիոյ եկեղեցիներում եկեղեցու մասին 1281 թուին: Գրել է Տօմարը (կամ Պարզատոմարը) Հեթում պատմիչի համար 1287 թուին - Յուշիկի, Բ. 476, Սիւնուան 337բ, 343ա, 556ա, Ձեռագիր վեմտիկի Բ. 1236: - Նոյն է նաեւ այն Ստեփաննոս քահանան, որ «թագադարմ իշխանի հրամանաւ» կազմեց ու գրեց Ամսաւորիկը (ցուցակ շրջանի լուսնի եւ աստղական) 1287 թուին: - Ձեռագիր վատիկանի (ՀԱ. 1892, 247ա):

Այսպէս կ'երեւայ թէ հազիւ 15-20 տարի վերջ հեղինակութեան օրինակուած է իմ հաւաքածոյիս Ստեփաննոս երեցի (Կոռիկոսցի) տոմարագիտական աշխատութիւնը, եւ մեզի հասած է, թէեւ վերակազմեալ ԺԼ. դարուն, կատարեալ վիճակի մէջ, ընտիր բնագրով: Գործէն օրինակներ գոյութիւն ունին, ըստ երեւոյթի թէ՛ Ս. Ղազար եւ թէ՛ Վատիկան պահուող հայ ձեռագրաց հաւաքածոներուն մէջ: Ուրեմն կարելի է համեմատական աշխատութեամբ բնագիր մը հրատարակել եւ կարելոր նպաստ մը եւս բերել հայ հին տոմարագիտութեան:

Երեւանի թիւ 1973 տոմարագիտական ձեռագրի մասին խօսելով, Արրահամեան կ'ըսէ որ գրուած է 1342ին Գրիգոր գրիչէն՝ ինչպէս որ գրուած է 1342ին Գրիգոր գրիչէն, ինչպէս պարզուած է, Յովհաննէս Երզնկացու աշակերտն է եղել: Ինչք, Յովհաննէս Երզնկացին մասնակցել է ձեռագրի գրելու գործում եւ թողել է իր փոքրիկ յիշատակարանները. Աղաչեմ ըգֆեգ Տէր, յիշեալ զիս, զմեղաւոր գրչիկս զՅովհաննէս (թ. 38)» (էջ 91): Անտարակոյս Արրահամեան չի կրնար ակնարկել Յով. Երզնկացի Պլուզին, որ մեռած էր 1326ին, եւ բնական է որ իր ակնարկութիւնը ըլլայ Յով. Երզնկացի Ծործորեցիի

մասին, որ քաջ գեղագիր եւ բազմադիրք գրիչ ալ էր, դասատու եւ մատենագիր ըլլալէ զատ: Նախ չեմ գիտեր թէ կը բաւէ լոկ գրչիկս զՅովհաննէս ստորագրող մը նոյնացնել Յով. Երզնկացի Ծործորեցիի հետ, կամ վերջապէս որեւէ Յովհաննէս Երզնկացի մը հետ: Երիզայի եւ Եկեղեցացուի նուիրում իմ գործիս առաջին հատորին մէջ այդ իսկ պատճառաւ այս Գրիգոր գրիչը Ծործորեցիի աշակերտներուն մէջ չըստեցի, թէեւ ձեռագիրը ծանօթ էր:

Հատորիս էջ 119էն սկսեալ բնագիրներն են որ կը հրատարակուին, երբոր կարելի է՝ համեմատեալ գոյութիւն ունեցող ծանօթ եւ մատչելի ձեռագիրներով: Արրահամեան իւրաքանչիւր բնագիր կը ծանօթագրէ խղճամտօք: Բնագիրներու շարքին վերջը կը յայտնէ որ Իմաստասէրի կրօնական գործերը այս հատորին մէջ չեն առնուած, քանի որ իր նպատակն է ատենցով կազմել առանձին աշխատանք եւ հրատարակել զատ հատորով:

Իրապէս շատ զարմանալի է որ Իմաստասէրի բնագիրներէն ոմանք միակ օրինակով մը միայն ծանօթ են: Կան որ նոյն իսկ 1840էն ըլլալու չափ ուշ օրինակութիւններ են, որոնց համար գործածուած օրինակները այժմ անծանօթ կը մնան, եթէ չեն փճացուած: Օրինակ, անոր Սարեկի տաղը ծանօթ է միայն Հ. Ալիշանի հրատարակութեամբ եւ օրինակով մը, որ այժմ կը գտնուի Չամառի վանքին հաւաքման մէջ: Արդեօք Իմաստասէրի այս գործին եւ միւս գործերէն ոմանց բարձր, խրթին նիւթն ու ո՞՞ն եղած է պատճառը անոնց բազմօրինակ մեզի հասած չըլլալուն: Ամէն պարագայի տակ շատ տխրելի է խորհիլ որ այս միակ օրինակներն ալ կրնային անհետ կորսուած ըլլալ, ինչպէս որ անտարակոյս կորսուած ըլլալու են ուրիշ բնագիրներ Իմաստասէրէ կամ ուրիշ արժէքաւոր մատենագիրներէ: Իցիւ թէ ասիկա խթան մը ըլլար մեզի օր առաջ հրատարակելու բնագիրներ՝ որոնք մեզի հասած են, զանոնք փրկելու ապագայ անորոշութիւններէ եւ վտանգներէ:

Արրահամեան այս արժէքաւոր եւ գրեմահատելի աշխատութիւնը կ'աւարտէ ուսերէն համառօտագրութեամբ մը, որ մէկ վերջ կու գան անուանացանկ եւ հատորին բովանդակութեան ցանկ: